Social Security (Սոցիալական ապահովության) համարներ ոչ-քաղաքացիների համար

Բովանդակություն

Արդյո՞ք ոչ-քաղաքացուն անհրաժեշտ է Social Security համար:	1
Ինչպե՞ս կարող եմ Social Security համար և քարտ ստանալ:	2
Ի՞նչ պետք է ինձ հետ բերեմ Social Security գրասենյակ:	2
Ե՞րբ պետք է դիմեմ:	3
Որքա՞ն արժի Social Security համարի և քարտի համար դիմելը:	3
Ի՞նչ անեմ, եթե համարն ինձ այլ պատճառով է անհրաժեշտ	3
Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ	4

Արդյո՞ք ոչ-քաղաքացուն անհրաժեշտ է Social Security համար:

Եթե Դուք United States-ում աշխատել ցանկացող ոչ-քաղաքացի եք, ապա Ձեզ անհրաժեշտ է Social Security համար, մնացած դեպքերում Ձեզ, հավանաբար, Social Security համար անհրաժեշտ չէ:

Ընդհանրապես, Social Security համար կարող են ստանալ միայն Department of Homeland Security-ի (DHS,Ներքին անվտանգության նախարարություն) կողմից United States-ում աշխատելու թույլտվություն ստացած ոչ-քաղաքացիները : Social Security համարներն օգտագործվում են պետությանն անձի աշխատավարձերի մասին հայտնելու և անձի՝ Social Security (Սոցիալական ապահովության) նպաստներ ստանալու իրավասությունը որոշելու համար: Ձեզ Social Security համար է հարկավոր աշխատելու, Social Security նպաստներ և պետական այլ ծառայություններ ստանալու համար:

Օրինական հիմքով երկրում գտնվող ոչ-քաղաքացիները կարող են զանազան նպաստներ և ծառայություններ ստանալ՝ առանց Social Security համար ունենալու: Ձեզ համար հարկավոր չէ՝ վարորդական իրավունք ստանալու, դպրոց ընդունվելու, մասնավոր բժշկական ապահովագրություն ձեռք բերելու, դպրոցական ճաշերի պետական ծրագրերին մասնակցելու կամ սուբսիդավորված բնակարանային շինարարության շրջանակներում տուն ստանալու դիմում ներկայացնելու համար:

Որոշ կազմակերպություններ օգտագործում են Social Security համարները Ձեզ՝ իրենց պահոցներում նույնականացնելու համար:

Այնուամենայնիվ, նրանցից շատերը, Ձեր պահանջով, կարող են նույնականացնել Ձեզ այլ միջոցներով։

Մենք չենք կարող Ձեզ Social Security համար տրամադրել՝ միայն վարորդական իրավունք ստանալու կամ վարկունակության ստուգում պահանջող ծառայությունից օգտվելու համար։

Թեև շատ կազմակերպություններ, օրինակ՝ բանկեր և վարկային ընկերություններ, կարող են Ձեզնից Social Security համար պահանջել, ընդհանուր առմամբ Դուք պարտավոր չեք ներկայացնել այն, եթե չունեք։

Ինչպե՞ս կարող եմ Social Security համար և քարտ ստանալ։

Եթե Դուք ներգաղթյալ եք, կարող եք դիմել երկու տարբերակով.

- Կարող եք դիմել Ձեր մշտական բնակության երկրում՝ նախքան United States գալը՝ U.S. Department of State-ին ներգաղթային վիզայի դիմում ներկայացնելիս։ Գրեթե բոլոր դեպքերում, ներգաղթի վիզայի Ձեր դիմումի հետ Social Security համար և քարտ ստանալու դիմում ներկայացնելով՝ Դուք ազատվում եք United States-ում Social Security գրասենյակ այցելելու անհրաժեշտությունից։ (Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք ***www.socialsecurity.gov/ssnvisa***) կամ
- Կարող եք անձամբ ներկայանալ Social Security գրասենյակ։ (Տե՛ս ստորև ներկայացված բաժինը, որում նշված է, թե ինչ պետք է Ձեզ հետ բերեք Social Security գրասենյակ)։

Եթե Դուք ներգաղթյալ չեք, ապա կարող եք դիմել երկու տարբերակով՝ կախված Ձեր վիզայի կարգավիճակից.

- Եթե Դուք օրինական հիմքով եք գտնվում United States-ում և պատրաստվում եք աշխատելու թույլտվություն ստանալու համար դիմել DHS՝ U.S. Citizenship and Immigration Services (USCIS), ապա SSN-ի համար կարող եք դիմել նույն USCIS դիմումի ձևաթղթով՝ Ձև I-765-ով (*Application for Employment Authorization*, *Աշխատանքի տեղավորման թույլտվության դիմում*)։ (Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս ***www.ssa.gov/ssnvisa/ebe.html***)։
- Եթե Դուք օրինական հիմքով եք գտնվում United States-ում և Ձեր վիզայի կարգավիճակը թույլ է տալիս Ձեզ աշխատել, այդ դեպքում Դուք պետք է անձամբ այցելեք Social Security գրասենյակ՝ դիմելու համար։

Ի՞նչ պետք է ինձ հետ բերեմ Social Security գրասենյակ։

Դուք պետք է ապացուցեք Ձեր ինքնությունը և ներգաղթային կարգավիճակը՝ աշխատանքի թույլտվությամբ ։

Որպեսզի ապացուցեք Ձեր ինքնությունը և ներգաղթային կարգավիճակը՝ աշխատանքի թույլտվությամբ, Դուք պետք է մեզ ներկայացնեք Ձեր ներկայիս ԱՄՆ ներգաղթային փաստաթղթերը և Ձեր վավերական արտասահմանյան անձնագիրը։ Ընդունելի ներգաղթային փաստաթղթերը ներառում են.

- Ձև I-551 (Մշտաբնակի քարտ, մեքենաընթեռնելի ներգաղթային վիզա),
- Ընդունման կնիք, որտեղ երևում է աշխատանքի թույլտվության ընդունման դասը,
- Ձև I-94 (*Arrival/Departure Record*) (*մեկնման և ժամանման արձանագրում*) կամ
- Ձև I-766 (*Employment Authorization Document/EAD)* (*Աշխատանքի տեղավորման թույլտվության փաստաթուղթ*)։

Փոխանակման ծրագրով այցելող անձիք. Եթե Դուք փոխանակման ծրագրով J-1 կամ J-2 այցելու եք, ապա պետք է մեզ ներկայացնեք նաև Ձեր Ձև DS-2019-ը՝ *Certificate of Eligibility for Exchange Visitor Status* (Փոխանակման ծրագրով այցելող անձի կարգավիճակ ստանալու իրավասության վկայականը) *կամ EAD-ը*: Եթե Դուք J-1 ուսանող, ուսանող-պրակտիկանտ կամ միջազգային փոխանակման ծրագրի մասնակից եք, ապա պետք է նամակ ներկայացնեք Ձեր հովանավորից: Նամակը պետք է գրված լինի հովանավորի պաշտոնական ձևաթղթի վրա և ունենա բնօրինակ ստորագրություն, որով Ձեզ թույլատրվում է աշխատել:

Միջազգային ուսանողներ. Եթե Դուք F-1 կամ M-1 ուսանող եք, ապա պետք է մեզ ներկայացնեք Ձեր Ձև I-20-ը՝ *Certificate of Eligibility for Nonimmigrant Student Status* (*Ոչ ներգաղթային վիզա ստանալու իրավասու ուսանողի կարգավիճակին համապատասխանելու վկայականը*) *կամ Designated School Official (DSO) նամակը*: Ուսանողի կողմից ներկայացվող այլ փաստաթղթերի վերաբերյալ տեղեկությունների համար խնդրե՛ք *Միջազգային ուսանողներ և Social Security համարներ* (Հրատարակություն No. 05-10181-AM):

Դուք պետք է ապացուցեք Ձեր տարիքը:

Դուք պետք է ներկայացնեք Ձեր արտասահմանյան ծննդյան վկայականը, եթե այն ունեք կամ եթե կարող եք այն ձեռք բերել 10 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե Դուք դա չեք կարող անել, ապա մենք կարող ենք որպես Ձեր տարիքի վկայություն հաշվի առնել այլ փաստաթղթեր, ինչպիսիք են՝ Ձեր վավերական անձնագիրը կամ DHS-ի կողմից տրված փաստաթուղթը :

Դուք պետք է դիմումի ձևաթուղթ լրացնեք:

Դուք պետք է լրացնեք *Social Security քարտի դիմումը (Ձև SS-5):* Դուք կարող եք դա անել Social Security գրասենյակում կամ կարող եք այդ ձևաթղթի պատճենը գտնել մեր կայքում, որը կարող եք տպել և բերել Ձեզ հետ:

Կարևոր է. Բոլոր փաստաթղթերը պետք է լինեն կա՛մ բնօրինակ, կա՛մ տրամադրող գործակալության կողմից հաստատված պատճեններ: Մենք չենք կրող ընդունել փաստաթղթերի պատճեններ կամ նոտարի կողմից վավերացված պատճեններ: Մենք չենք կարող նաև ընդունել ստացական, որը ցույց է տալիս, որ Դուք դիմել եք տվյալ փաստաթղթը ստանալու համար:

Մենք կարող ենք մեկ փաստաթուղթն օգտագործել երկու տարբեր նպատակներով: Օրինակ՝ մենք կարող ենք օգտագործել Ձեր DHS EAD-ը՝ որպես Ձեր անձը հաստատող փաստաթուղթ և որպես աշխատանքի թույլտվությամբ ներգաղթային կարգավիճակի ապացույց: Ձեր ծննդյան վկայականը կամ անձնագիրը կարող է ծառայել որպես տարիքի ապացույց: **Այնուամենայնիվ, Դուք պետք է ներկայացնեք առնվազն երկու տարբեր փաստաթղթեր:**

Ե՞րբ պետք է դիմեմ:

Մենք խորհուրդ ենք տալիս United States ժամանելուց հետո 10 օր սպասել՝ նախքան Social Security համարին դիմելը. այդ կերպ մեզ համար ավելի հեշտ կլինի ստուգել Ձեր DHS փաստաթղթերն առցանց, ինչն իր հերթին կարագացնի Social Security համարի Ձեր դիմումի մշակման գործընթացը:

Մենք փոստով կուղարկենք Ձեր Social Security համարի քարտը՝ հենց որ ստանանք Ձեր մասին բոլոր տեղեկություններն ու համապատասխան տրամադրող մարմինների միջոցով ստուգենք Ձեր փաստաթղթերը:

Որքա՞ն արժի Social Security համարի և քարտի համար դիմելը:

Social Security համարի և քարտի համար դիմելն անվճար է:

Ի՞նչ անեմ, եթե համարն ինձ այլ պատճառով է անհրաժեշտ

Եթե Դուք DHS –ի կողմից United States-ում աշխատելու թույլտվություն չեք ստացել, ապա կարող եք Social Security համար ստանալ միայն եթե կարողանաք ապացուցել, որ այն Ձեզ անհրաժեշտ է աշխատանքին չառնչվող որևէ օրինական պատճառով: Դա կարող է տեղի ունենալ, օրինակ, եթե նահանգային կամ դաշնային օրենքը պահանջում է, որ Դուք ունենաք Social Security համար, որպեսզի ստանաք նպաստներ, որոնց նկատմամբ արդեն ապացուցել եք Ձեր իրավասությունը:

Եթե Ձեզ համարն անհրաժեշտ է հարկային նպատակներով, և Դուք չունեք United States-ում աշխատելու թույլտվություն, ապա կարող եք դիմել Internal Revenue Service-ին (IRS, Ներքին եկամուտների ծառայություն)՝ *Individual Taxpayer Identification Number* (ITIN, *Անհատ հարկատուի նույնականացման համար*) ստանալու նպատակով: Անձամբ այցելեք IRS կամ զանգահարեք IRS հետևյալ անվճար հեռախոսահամարով՝ **1-800-TAXFORM** (**1-800-829-3676**), և խնդրեք Ձև W-7-ը, *Անհատ հարկատուի նույնականացման համարի դիմումը*:

Եթե որևէ ձեռնարկություն կամ պետական մարմին Ձեզնից Social Security համար է պահանջում, և Դուք չունեք United States-ում աշխատելու թույլտվություն, հարցրեք, թե արդյոք նրանք կարող են Ձեր անձը նույնականացնել մեկ այլ տարբերակով: Հիմնականում, անհրաժեշտ ծառայությունը կամ արտոնագիրը կարելի է ստանալ առանց Social Security համար ունենալու:

Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ

Կան Սոցիալական Ապահովության Ծառայության հետ կապ հաստատելու տարբեր միջոցներ, այդ թվում առցանց, հեռախոսով և անձնապես: Մենք այստեղ ենք՝ Ձեր հարցերին պատասխանելու և Ձեզ սպասարկելու նպատակով: Ավելի քան 80 տարվա ընթացքում, Սոցիալական Ապահովությունը օգնում է ապահովելու այսօրվա և վաղվա օրը՝ միլիոնավոր մարդկանց տրամադրելով նպաստներ և ֆինանսական աջակցություն՝ իրենց կյանքի ճանապարհին:

Այցելե՛ք մեր կայքէջը՝

Ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ Սոցիալական Ապահովության գործնեություն վարելու ամենահարմար եղանակը դա մեր՝ ***www.socialsecurity.gov*** կայքէջը այցելելն է: Այնտեղ Դուք կարող եք՝

- Ստեղծել *my* Social Security account (իմ Սոցիալական Ապահովություն անձնական էջը)՝ Ձեր *Social Security Statement* (*Սոցիալական Ապահովության հաշվետվությունը*) դիտելու, Ձեր հասույթը հավաստելու, նպաստների հավաստագրության նամակը տպելու, Ձեր ուղղակի փոխանցման (direct deposit) վերաբերյալ տեղեկատվությունը փոխելու, Ձեր Medicare-ի քարտի փոխարինում հայցելու, SSA-1099/1042S փոխարինում ստանալու նպատակով և ավելին;
- Դիմել Extra Help (Օժանդակ օգնության) ծրագրին Medicare-ի դեղատոմսով տրամադրվող դեղորայքի ծրագրով նախատեսված ծախսերի համար/
- Դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստների համար
- Գտնել մեր հրատարակությունների կրկնօրինակները
- Ստանալ պատասխաններ հաճախ տրվող հարցերին և
- Շատ ավելին

Նշված ծառայություններից որոշները հասանելի են միայն անգլերեն լեզվով: Այցելե՛ք մեր Multilanguage Gateway բաժինը (Բազմալեզու էջը) ՝ Հայերեն լեզվով տեղեկատվություն ստանալու համար: Մենք տրամադրում ենք անվճար թարգմանչական ծառայություններ, որպեսզի օգնենք Ձեզ վարելու Ձեր Սոցիալական Ապահովության գործնեությունը: Տվյալ թարգմանչական ծառայությունները հասանելի են անկախ նրանից, թե Դուք դիմել եք մեզ հեռախոսով, թե այցելել եք Սոցիալական Ապահովության գրասենյակ:

Հեռախոս

Եթե Դուք չունեք համացանցի (Ինտերնետի) հասանելիություն, ապա հեռախոսի միջոցով մենք շատ ավտոմատացված ծառայություններ ենք առաջարկում՝ օրը 24 ժամ շաբաթը 7 օր: Զանգահարեք մեզ մեր անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով կամ մեր TTY (հեռատիպ)՝ **1-800-325-0778** հեռախոսահամարով՝ լսողության հետ խնդիրներ ունենալու դեպքում:

Եթե Դուք աշխատակցի հետ խոսելու կարիք ունեք, ապա մենք կարող ենք պատասխանել Ձեր զանգերին՝ Երկուշաբթիից Ուրբաթ ժամը առավոտյան 07:00-ից մինչև երեկոյան 19:00-ը: Մենք խնդրում ենք Ձեր համբերատարությունը ծանրաբեռնված շրջաններում, քանի որ Դուք կարող եք ունենալ սովորականից ավելի հաճախ ստացվող ծանրաբեռնվածության ազդանշան և ավելի երկար սպասելաժամանակ մեզ հետ խոսելու համար: Մենք ակնկալում ենք սպասարկել Ձեզ:

Securing today and tomorrow

Social Security Administration
Publication No. 05-10096-AM | March 2018
Social Security (Սոցիալական ապահովության) համարներ ոչ-քաղաքացիների համար
Social Security Numbers for Noncitizens (Armenian)
Produced and published at U.S. taxpayer expense
Կազմված և հրատարակված է ԱՄՆ հարկ վճարողների հաշվին: